

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի «Հայոց Եկեղեցու
պատմություն» առարկայի
հարապետական փուլ
8-րդ դասարան - 120 րոպե

N 1-4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ո՞վ էր Մարիամ Աստվածածնի հայրը. (0,5 միավոր)

- 1) Հովսեփը
- 2) Դավիթը
- 3) Հովակիմը
- 4) Ջաքարիան

2. Ի՞նչ է նշանակել բարեկենդան բառը գրաբարյան հայերենով. (0,5 միավոր)

- 1) տոնակատարություն
- 2) ուրախություն
- 3) առատություն
- 4) բարություն

3. Ի՞նչ է կոչվում Սուրբ Հարությանը նախորդող երեկոյան պատարագը.

- 1) Խաղաղական
- 2) Երեկոյան
- 3) Ջատկական
- 4) Ճրագալույցի

(0,5 միավոր)

4. Ի՞նչ էր Գրիգոր Լուսավորչի անունը մինչ մկրտությունը. (0,5 միավոր)

- 1) Սուրեն
- 2) Անակ
- 3) Վաղարշ
- 4) Արտաշիր

N 5-9

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

5. Հրեաների առաջին թագավորը եղել է _____ը: (1միավոր)

6. Ժողովրդական մտածողության մեջ _____ը չի գոհվել, այլ «լույս» է դարձել և արագահաս է, ինչպես լույսը: (1միավոր)

7. Ս. Մեսրոպ Մաշտոցն ասորական բնագրից Աստվածաշնչի թարգմանությունը սկսել էր դեռևս _____ քաղաքում: (1միավոր)

8. 325 թ. Նիկեայի ժողովը մերժեց _____ ուսմունքը: (1միավոր)

9. Կաթոլիկ Ֆրանցիսկյան միաբանությանը հարած _____ թագավորը Միսում ժողով է գումարում: (1միավոր)

N 10-11

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

10.Բառերը համապատասխանեցնել բացատրություններին. (1միավոր)

1.սնտիապաշտ	ա. հապճեպ	1	
2.փութանակի	բ.անապատական	2	
3.բրածեծ անել	գ.մարտիրոս	3	
4.ճգնավոր	դ. սնահավատ	4	
	ե. գանահարել		

11.Իրադարձությունները համապատասխանեցնել թվականներին. (1 միավոր)

1. Մաշտոց Ա Եղիվարդեցու գահակալումը	ա.1066 թ.	1	
2. Մանազկերտի ճակատամարտը	բ. 1292 թ.	2	
3. Ծամնդավի ժողովը	գ.1149 թ.	3	
4. Լևոն Մեծագործի թագադրումը	դ. 1071 թ	4	
5. Հռոմկլա կաթողիկոսանիստ ամրոցի գրավումը	ե. 897 թ..	5	
	զ. 1198 թ.		

N12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

12. «Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես, որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա»:

1.Ու՞մ մասին է խոսքը: (1միավոր)

2.Ու՞մ աշխատությունից է մեջբերումը: (1միավոր)

13. Նա քաղցր եղանակով գրեց Սուրբ Պատարագի քարոզը, նույն խոհականությամբ՝ շարականների տները, իր անվան տառերով երկու գանձեր՝ մեկը «Վարդավառի», մյուսը «Աստվածածնի փոխման»:

1.Ու՞մ աշխատությունից է մեջբերումը: (1միավոր)

2. Ու՞մ մասին է խոսքը: (1միավոր)

N 14-16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն
պահանջող առաջադրանք:

N 14

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ու՞մ անունն է ավելորդ: (0,5միավոր)

Աթենաս, Հեփեսոս, Արես, Ահրիման, Հերա:

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր տոնն է ավելորդ: (0,5միավոր)

Սուրբ Ծնունդ, Սուրբ Հարություն, Թարգմանչաց, Պայծառակերպություն, Խաչվերաց:

N 15

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1 միավոր)

- ա. Կամրջաձորի վանք, Գոշավանք, Հնձուց վանք
 - բ. Գոշավանք, Այրիվանք, Նորավանք
 - գ. Սաղմոսավանք, Նորավանք, Հաղպատի վանք
-
-

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1 միավոր)

- ա. Հովսեփ Ա, Սմբատ Բ, Բաբկեն Ա
 - բ. Ներսես Ա, Գագիկ Ա, Կոմիտաս Ա
 - գ. Գագիկ Բ, Սմբատ Բ, Հեթում Բ
-
-

N 16

1. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. (2 x 0.5 = 1 միավոր)

- 1) Պահլավունի տոհմի գահակալություն շրջանը տևում է շուրջ 240 տարի:
- 2) Գրիգոր Դ կաթողիկոսը 1178 թ. հրավիրում է Հռոմկլայի համահայկական Եկեղեցական ժողովը:
- 3) Բյուզանդիայի հետ հարաբերությունները և եկեղեցական երկխոսությունը խզվեցին Լևոն Բ-ի ժամանակ:
- 4) Գլաձորի համալսարանն իր կրթական ծրագրերով գերազանցեց ինչպես Հայաստանի, այնպես էլ Կիլիկյան Հայաստանի ուսումնագիտական մյուս բոլոր կենտրոններին:
- 5) Խաչիկ Բ-ն նորոգում է Արգինայի կաթողիկոսարանը:

2. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ.

(2 x 0.5 = 1 միավոր)

- 1) Հուսիկ հայրապետի մահից հետո նրա երկու որդիները հոգևորական են ձեռնադրվում:
- 2) Ներսես Բ կաթողիկոսի նախաձեռնությամբ գումարվեց հայոց առաջին ազգային-եկեղեցական ժողովը:
- 3) Ս. Սահակ Պարթևը տիրապետում էր հունարենին, ասորերենին, պարսկերենին:
- 4) Դվինի երկրորդ ժողովի որոշումներով հայությունը վերջնականապես հաստատում էր իր ազգային-եկեղեցական ինքնորոշումը:
- 5) 806 թ. վրաց եկեղեցին բաժանվում է արևելյան եկեղեցական ընտանիքից:

N 17

Շարադրանք (2 միավոր)

Ներկայացրեք Ստեփանոս Ե Սալմաստեցու գործունեությունը և նրա կողմից հրավիրված խորհրդաժողովի մանրամասները: